65 Հիսուսին միայն սրտումս պիտ ունենամ,

1. Հիսուսին միայն սրտումս պիտ ունենամ,
Հիսուսը միայն այնտեղ բնակի,
Իր սիրույն ոչ մի բան հավասար չկա,
Միայն Նրա մոտ հոգիս կհանգչի:

Էլ ես չեմ հոգա, էլ չեմ տրտնջա,
Հիսուս իմ Եղբայրն ինձ մոտ է, ներկա,
Նաև խոստացավ իմ ձեռքիցս բռնել
Եվ տանել այնտեղ, ուր միշտ հանգիստ կա:

2. Հիսուսը միայն ինձ մեղքից ազատեց,
Հիսուսը միայն ինձ բարիք արեց,
Նրա մեծ սերը իմ սիրտը կոտրատեց
Եվ ապա խաղաղության դեղ դրեց:

3. Հիսուսին միայն կյանքս կպատկանի,
Նա՛ է իմ Փեսան և ես՝ հարս Նրա,
Միայն Նրա կամքը պիտի կատարեմ,
Եվ Նա սպիտակ հանդերձներ ինձ կտա:

4. Հիսուսը միայն ինձ ուժ կպարգևե,
Երբ պատերազմի մեջ տկարանամ,
Նրա կենաց աղբյուրից ես կխմեմ
Կյանք և զորություն միշտ, ամեն անգամ: